ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԿՐՏՉԻ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ձ՛երդ Վեհափառութիւն

Իմ հօր՝ Քերոբէ Պատկանեանի, մահուանից յետոյ ինձ ժառանգութիւն է մնացել արժէքաւոր գրադարան Հայոց լեզուի, գրականութեան և արևելքի պատմութեան վերաբերեալ։ Իմ ծառայութիւնը և մասնաւոր պարապմունքները—վիճակագրութիւն, աշխարհագրութիւն և ժողովրդագրութիւն,—այն աստիճան կլանում են իմ ոյժերը, որ հնար չունիմ պարապելու այն առարկաներով, որոնց իմ հայրը իւր ամբողջ կեանքը նուիրեց։ Ես եկայ այն եզրակացութեան, որ այդ գրադարանը կարող է աւելի օգտակար լինել մասնագէտներին, քան թէ ինձ։ Ի նկատի ունենալով այդ, որոշեցի գրադարանի մեծագոյն մասը ընծայաբերել Էջմիածնի վանքի մատենադարանին, որը հայկական բանահիւսութեան գլխաւոր կեդրոնն է։ Ես պարտաւորուում եմ կազմել նուիրուած գրքերի ցուցակը, որը խնդրում եմ տալ վանքի հրատարակութիւններից մէկում։ Գրքերից և բրօշիւրներից բացի կցանկանայի նոյն մատենադարանին տալ իմ հանգուցեալ հօր թղթերի մի մասը, որը վերաբերում է նրա մասնագիտութեան։ Միայն ով որ օգտուի նրանցից, կխնդրէի չմոռանալ ծանօթութիւնների մէջ յիշել, թէ ինչ տեսակ տեղեկութիւններ է քաղել այդ աղբիւրից։

Բացի այդ, կխնդրէի Ձերդ Վեհափառութիւնից ածել ի կատար հետեւեալը. 1, կարգադրել կապել այստեղ գրքերը և ուղարկել վանքի հաշուով. 2, նուիրած գրքերը դարսել առանձին պահարանում և պահպանել կրակից ապահով չինութեան մէջ. այդ պահարանի վրայ կախել իմ հօր պատկերը, որ ես կուղարկեմ Էջմիածին, և 3, Դասաւորել թղթերը և կազմել նրանց ցուցակը։

Նախապէս իմ շնորհակալութիւնը յայտնելով Ձերդ Վեհափառութեան իմ այս խնդիրքի կատարման համար, ես ի սրտէ կցանկանայի, որ իմ նուիրած գրքերը հայ ազգին այնքան օգուտ բերեն, որ չափով այդ գրքերից օգտուել է իմ հանգուցեալ հայրը։

Մատչելով ի համբոյր աջոյ Ձերդ Վեհափառութեան, ակնածութեամբ մնամ խոնարհ որդի՝

Ս. Պատկանեանց

Ս. Պետերբուրգ
1903 թ. 8. յունուարի